**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**№ ԷԱՃԱՊՁԲ-7/3-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ)**
**ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան 30 .08.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և ՄԱՍՏԵՐՖՈՒԴ ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 19.02.2019թ. կնքված № ԷԱՃԱՊՁԲ-7/3-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.10 կետը և 22.05.2019թ. կնքված Պայմանագրին կից № 1 համաձայնագիրը՝ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին մասնակի լուծել Պայմանագրին կից № 1 համաձայնագիրը՝ չմատակարարված 9000 կգ կետչուպի մասով, համաձայն սույն Համաձայնագրի №1 և №2 Հավելվածների: Արդյունքում № 1 համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 9996850 (ինը միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

Մաստերֆուդ ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ավան, Իսահակյան 4շ. բն. 29
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1150010141621625
ՀՎՀՀ 00877786
տնօրեն

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Տնօրեն**

Հավելված № 1
№ ԷԱՃԱՊՁԲ-7/3-6 գնման պայմանագրի համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Գինը (դրամով) | Ընդհանուր գումար | Անհրաժեշտ քանակը, 2019թ ըստ ամիսների | | | | | | Քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | |
| 1 | տոմատի կետչուպ (Կետչուպ) | կգ | 588.05 | 9996850 | | | 6500 | 6500 | 2000 | 2000 | 17000 |

Հավելված № 2
№ ԷԱՃԱՊՁԲ-7/3-6 գնման պայմանագրի համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | տոմատի կետչուպ (Կետչուպ) | 15871230/2 | 3822325 | 7644650 | 8820750 | 9996850 | 9996850 | 9996850 | 9996850 |

**Ծանոթություն՝** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

Մաստերֆուդ ՍՊԸ
տնօրեն

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ